,,ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԵԿՆԱՐԿԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ,, ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pam-bak@mail.ru

,,17,, փետրվարի 2025թ. Փամբակ համայնք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. թ. փետրվարի 17-ին, ժամը 11:00-ին Փամբակի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրային քննարկում՝ 2025 թվականին Փամբակ համայնքում մեկնարկած մասնակցային բյուջետավորման գործընթացում բնակիչների կողմից ներկայացված առաջարկների վերաբերյալ:

Հանրային լսումը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սամվել Անանյանը, մասնակցում էին աշխատակազմի քարտուղար, մասնակցային բյուջետավորման գործընթացը կառավարող հանձնաժողովի նախագահ Ռաիսա Մինասյանը, հանձաժողովի տեղակալ Հասմիկ Մացակյանը, անդամներ Ավագ Հովհաննիսյանը, Աստղիկ Օհանյանը, աշխատակազմի պատասխանատուներ և համայնքի բնակիչներ:

Ս. Անանյանը ողջունեց բոլորին և շնորհակալություն հայտնեց լսումներին մասնակցելու համար:

Մասնակցային բյուջետավորման գործընթացը կառավարող հանձնաժողովի նախագահ Ռաիսա Մինասյանը ներկայացրեց, որ ՄԲ գործընթացի առաջարկների ներկայացման փուլում համայնքի բնակիչների կողմից ներկայացվել է 5 առաջարկ: Առաջարկները ուսումնասիրվել են գործընթացը կառավարող հանձնաժողովի կողմից, իրականացվել են ներկայացված առաջարկների նախնական գնահատում և յուրաքանչյուր առաջարկի համապատասխանության որոշում՝ մեթոդաբանությամբ սահմանված չափանիշներին:

Ռ. Մինասյանը նշեց, որ քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշել է, որ բոլոր 5 առաջարկները համապատասխանում են սահմանված չափանիշներին և ներկայացրեց առաջարկները.

1. Համայնքի ենթակառուցվածքների բարելավում, էքսկավատոր /բազմաֆունկցիոնալ/ տրակտորի ձեռբերում /հեղինակ՝ Վահագն Ղազարյան/:
2. Գորգագործության /կարպետագործության/ դասընթացների կազմակերպում՝ շարժական ծառայությունների մատուցման միջոցով /հեղինակ՝ Արմինե Կարապետյան/:
3. Ազնվաձորի այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության խաղահրապարակի հատակի կահավորում ռետինե ծածկով /հեղինակ՝ Մոնիկա Եղիկյան/:
4. Մարգահովիտի մանկապարտեզի համար թվով 30 մահճակալի / 15 հատ երկհարկանի/ և թվով 60 աթոռի ձեռք բերում / հեղինակ՝ «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ, ներկայացնող՝ Էմիլիա Մարտիրոսյան/:
5. Մարգահովիտ բնակավայրի 3-րդ փողոցում կոյուղու /մոտ 1 կմ/ կառուցում /հեղինակ՝ «Մարգահովիտի երիտասարդական կենտրոն» ՀԿ, ներկայացնող՝ Էմիլիա Մարտիրոսյան/:

Ներկա բնակիչները ողջունեցին նախաձեռնությանը և հավանություն տվեցին առաջարկ նախագծերին:

Օգտվելով առիթից բնակիչներին տեսասահիկով ներկայացվեց թէ ինչպես պետք է մասնակցեն քվեարկությանը, գրանցվեն համայնքի պաշտոնական էջում և քվեարկեն իրենց նախընտրելի առաջարկի/ների համար:

Նիստ վարողը հորդորեց բոլորին լինել ակտիվ, տեղեկատվությունը տարածել հարազատների և ծանոթների շրջանում՝ քվեարկության փուլում առավել բարձր ցուցանիշներ ապահովելու համար:

Փոքրակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ս. Անանյան

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

17.02.2025թ.

«2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԵԿՆԱՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Հասցեն	Հեռախոսահամարը	Մասնակցի ստորագրությունը
1	[illegible]	[illegible]	093993271	[illegible]
2	[illegible]	[illegible]	093234545	[illegible]
3	[illegible]	[illegible]	094391986	[illegible]
4	[illegible]	[illegible]	094 140032	[illegible]
5	[illegible]	[illegible]	033 006919	[illegible]
6	[illegible]	[illegible]	097749377	[illegible]
7.	[illegible]	գ. [illegible]	093256756	[illegible]
8.	[illegible]	գ. [illegible]	098731475	[illegible]
9.	[illegible]	[illegible]	091690313	[illegible]
10	[illegible]	[illegible]	098142252	[illegible]
11.	[illegible]	[illegible]	098 194062	[illegible]
12	[illegible]	[illegible]	098173788	[illegible]
13	[illegible]	[illegible]	077103025	[illegible]
14	[illegible]	[illegible]	094852247	[illegible]
15	[illegible]	[illegible]	098522228	[illegible]
16.	[illegible]	[illegible]	077386840	[illegible]

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ/Ծ Ս. [illegible]ԱՇԱՏՅԱՆ